



**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Հ Ր Ա Մ Ա Ն № 38-Ա**

**ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 32-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ս. Բաղդասարյանի դիմումը, Դատական դեպարտամենտի ղեկավարի լիազորությունները ժամանակավորապես կատարող Խ. Ղազարյանի միջնորդագիրը և համաձայն «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 96-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի և Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի թիվ ԲԴԽ-25-Ո-58 որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի 10-րդ ենթակետի՝

1. Դատական կարգադրիչների ծառայության պետ, Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի պարտականությունները ժամանակավորապես կատարելու նպատակով Սուրեն Բաղդասարյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ 2021 թվականի հուլիսի 20-ից մինչև նշված թափուր պաշտոնի օրենքով սահմանված կարգով համալրումը:

2. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի 2021 թվականի հունիսի 28-ի «Ծառայությունից ազատելու մասին» թիվ 32-Ա հրամանի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

2021թ. հուլիսի 19  
ք. Երևան

**Գ. ԶԱՆԳԻՐՅԱՆ**